ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/84

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն
Բողոք բերող՝«Վերիտաս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Մ. Համբարձումյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրով գնանշման հարցում, անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Վերիտաս» ՍՊԸ-ի, (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 30.10.2019թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ «Վերիտաս» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով խնդրել է՝ արգելել ՀՀ առողջապահության նախարարությանը ընդունել որոշումներ, կնքել պայմանագրեր, ինչպես նաև պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1» և «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրերով գնման ընթացակարգերը, իսկ վերահայտարարելու դեպքում վերացնել բողոքով նկարագրված խախտումները:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) բողոքը մակագրվել է 30.10.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը՝ թիվ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրով գնման ընթացակարգի մասով ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/79 համարի ծածկագիրը: Թիվ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1» ծածկագրով գնման ընթացակարգի մասով բողոքը վերադարձվել է՝ հայտերը բացվելուց հետո ներկայացված լինելու հանգամանքից ելնելով, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի դրույթները:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 24.10.2019թ.-ի թիվ 580-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/79 համարի ծածկագրով բողոքի քննությունը 01.11.2019թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

04.11.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/84 համարի ծածկագիրը և 07.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 07.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.11.2019թ.-ին:

2. <u>«Վերիտաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Վերիտաս» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

« 1.1 ՀՀ առողջապահության նախարարության կողմից 20.09.2019թ. հայտարարվել է ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1 և ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1 ընթացակարգերը: Գնման առարկա բժշկական սարքավորումներ:

1.2 Սահմանված ժամկետում և պատշաճ ձևով ուղարկված հարցումներին Պատվիրատուն պատասխանել է օրենքով նախատեսված ժամկետի խախտմամբ:

Մեր կողմից 2019թ. հոկտեմբերի 7-ին ուղարկվել է նույն բովանդակությամբ մեկական հարցում ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1 և ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1 ընթացակարգերի համար, սակայն Պատվիրատուն դրանց պատասխանել է 21 օր անց, հոկտեմբերի 28-ին:

1.3 Պատվիրատուի կողմից դրսևորվել է խտրական մոտեցում, քանի որ որոշ չափաբաժինների համար պահանջվել է ISO 13485 և CE սերտիֆիկատներ, իսկ մյուսների համար ոչ:

1.4 Հրավերում 5-րդ էջում նշված է, որ «Սույն գնման ընթացակարգը հայտարարվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան» մինչդեռ Armeps համակարգում հստակ նշված են ձեռք բերման ենթակա ապրանքների գնման գները: Բացի այդ, առկա է ՀՀ կառավարության որոշում, որով ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացվել է 2,076,786.2 ՀՀ դրամ բժշկական սարքավորումների ձեռք բերման համար, հետևաբար ֆինանսական միջոցները առկա են, իսկ Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառումը ոչ իրավաչափ:

2.1 Գնումների մասին օրենքի 29-րդ հոդվածի 1 կետի համաձայն «Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում»: Տվյալ դեպքում պատվիրատուն չի տրամադրել պարզաբանումը օրենքով նախատեսված ժամկետում:

2.2 Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն սույն մասը կարող է կիրառվել եթե՝

ա) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

բ) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Հարկ է նշել, որ Armeps համակարգում հստակ նշված են սույն ընթացակարգով ձեռք բերման ենթակա ապրանքների գնման գները, ուստի Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման իրավական հիմքերը բացակայում են:

Բացի այդ, ՀՀ 2019 թվականի ՀՀ Կառավարության 27 հունիսի 2019 թվականի N 783-Ն որոշման հավելված №3-ի համաձայն, 31002 ծրագրով ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացվել է 2,076,786.2 ՀՀ դրամ, հետևաբար ֆինանսական միջոցները առկա են, իսկ Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառումը ոչ իրավաչափ:

Տվյալ դեպքում՝ Պաստվիրատուի կողմից բերվող այն պատճառաբանությունը, որ <<Առողջապաստության նաստարարությունը չի կարողացել նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների հաստար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը>>, ահիմն է, քանի որ ՀՀ կառավարության որոշմամբ Պատվիրատուին հատկացված ֆինանսական միջոցների չափը վերջինիս հայտնի է, իսկ դրանց բաշխվածությունը արտացոլված է Armeps համակարգում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ակնհայտ է դառնում, որ Պատվիրատուն ցանկանում է արհեստականորեն կիրառել Գնումների մասին օրենքի 15-րդ հողվածի 6-րդ մասը, ինչը թույլ կտա վերջինիս խուսափել իր համար անցանկալի ընկերությունների հետ պայմանագիր կնքելուց և դրանցից բժշկական սարքավորումներ գնելուց, որպես հիմնավորում բերելով ֆինանսական միջոցների բացակայությունը, ինչը չի համապատասխանում իրականությանը: Տվյալ դեպքում անցանկալի ընկերություններ կարող են համարվել բոլոր այն ընկերությունները, որոնք պարբերաբար բողոքներ են ներկայացնում Պատվիրատուի կողմից կատարված խախտումների վերաբերյալ.

2.3 ISO 13485 և CE սերտիֆիկատներ պահանջելու վերաբերյալ մեր հարցմանը, Պատվիրատուն պաստասխանել է <<ISO 13485 կամ համարժեք սերտիֆիկատը հավաստում է, որ առաջարկվող ապրանքը բժշկական նշանակության է, նախագծված և արտադրված է որակի կառավարման համակարգ ունեցող ընկերությունում:

CE Mark կամ համարժեք սերտիֆիկատը հավաստում է այն մասին որ արտադրանքը պատրաստված է հաշվի առնելով առողջության, անվտանգության, արտաքին միջավայրի վրա ազդեցության, վնասակարության գործոնները և հանդիսանում է որակի երաշխիք>>:

Վերոգրյալից հետևում է, որ Պատվիրատուի համար խիստ կարևոր է երաշխավորված որակով և անվտանգ բժշկական սարքավորումների ձեռք բերումը, սակայն անհասկանալի է, թե ինչու Պատվիրատուն նույն պահանջը չի դրել բոլոր չափաբաժինների համար: Դրա փոխարեն, Պատվիրատուն ընտրողաբար է պահանջել վերոնշյալ սերտիֆիկատները, այսինքն ստացվում է, որ Պատվիրատուի համար որոշ բժշկական սարքերի որակն ու անվտանգությունը կարևոր չեն կամ էլ Պատվիրատուն նախապես ունի նախատրամադրվածություն և կոնկրետ արտադրողի առավելություն տալու ցանկություն,

ինչն արտահայտվում է տվյալ չափաբաժինների համար որակի սերտիֆիկատների պահանջ չդնելով, փաստացիորեն սահմանելով ավելի թույլ պահանջներ իր կողմից նախընտրելի արտադրողների համար:

Որպես վերջաբան տեղեկացնում ենք, որ նշված ընթացակարգերին մասնակցող ընկերությունների քանակը չի կարող դիտվել որպես ցուցանիշ այն բանի, որ մրցույթը կազմակերպվել է Գնումների մասին օրենքին համապատասխան:»:

Ելնելով վերոգրյալից, «Վերիտաս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ արգելել ՀՀ առողջապահության նախարարությանը ընդունել որոշումներ, կնքել պայմանագրեր, ինչպես նաև պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրով գնման ընթացակարգը, իսկ վերահայտարարելու դեպքում վերացնել բողոքով նկարագրված խախտումները:

3. <u>ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 31.10.2019թ.-ին թիվ 241-ՆԳ գրությամբ դիմել ՀՀ առողջապահության նախարարությանը՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 30.10.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 01.11.2019թ.-ի գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Առողջապահության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1» և «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրերով գնման ընթացակարգերի վերաբերյալ՝ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի կապակցությամբ, Առողջապահության նախարարությունը ունի իր դիտողությունները: Մասնավորապես.

Բողոքի 1.2 կետի վերաբերյալ՝ հարցադրումներին «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներից ուշ պարզաբանելը պայմանավորված է հետևյալ հանգամանքով: «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հարցադրումը հասանելի չի եղել առողջապահության նախարարությանը (armeps համակարգում չի արտացոլվել, բացի այդ համակարգողը սահմանված կարգով չի ստացել ծանուցում էլեկտրոնային փոստով, ինչպես որ սովորաբար լինում է): Սակայն, այլ մասնակցի կողմից հարցադրում ստանալուց հետո, «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հարցադրումը ևս armeps համակարգում

հայտնվել է: Ներկայացված հարցադրումներին, այդ թվում նաև «Վերիտաս» ՍՊԸ-ի, սահմանված կարգով պարզաբանվել է: Եթե «Վերիտաս» ՍՊԸ-ին չի բավարարել Առողջապահության նախարարության կողմից ներկայացված պարզաբանումը, ապա վերջինս հնարավորություն ուներ կրկին անգամ ներկայացնել պարզաբանման հարցադրում, որից վերջինս չի օգտվել:

Բողոքի 1.3 կետի՝ հրավերով սահմանված ապրանքների պահանջվող սերտիֆիկատների վերաբերյալ, հայտնում եմ, որ առողջապահության նախարարության կողմից ներկայացված պարզաբանմամբ լիարժեք պարզաբանվել է պահանջվող սերտիֆիկատների անհրաժեշտության պահանջը: Իսկ ինչ վերաբերվում է, որ ոչ բոլոր ապրանքների համար է սահմանվել, հայտնում եմ, որ դա պայմանավորված է տեխնիկական բացթողնմամբ: Բացի այդ հավաստիացնում եմ, որ սերտիֆիկատների պահանջ չսահմանելը նշված ապրանքների համար չի վտանգում որակյալ և անվտանգ սարքավորումների ձեռքբերմանը: Ելնելով վերոգրյալից հայտնում եմ, որ բողոքաբերի հայտարարությունը, որ առողջապահության նախարարությունը դրսևորել է խտրական մոտեցում՝ անհիմն է:

Բողոքի 1.4 կետի, թե մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան՝ առանց ֆինանսական միջոցների, մինչդեռ առկա են ֆինանսական միջոցներ, հայտնում եմ, որ Օրենքի այս կետը կիրառվել է հետևյալ փաստարկների հիման վրա.

1. Առողջապահության նախարարությունը չի կարողացել նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը:

2. Մատակարարման պայմաններից ելնելով: Մասնավորապես, ըստ բողոքաբերի կողմից նշված Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 27-ի թիվ 783-Ն որոշմամբ, բժշկական նշանակության ապրանքները պետք է ձեռքբերվեն մինչև 2019 թվականի վերջ՝ հաշվի առնելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները: Մինչդեռ հայտարարված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1» և «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրերով գնման ընթացակարգերի համար մատակարարումը 180 օրացուցային օր է, հետևաբար կնքվելիք պայմանագրերի կատարումը իրականացվելու են 2020 թվականի ընթացքում: Բացի այդ, վերոնշյալ գնման ընթացակարգերի համար հնարավոր չէ սահմանել կանխավճար՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները: Միաժամանակ, հավաստիացնում եմ, որ Հայաստանի Հանրապետության կառավարության

2019 թվականի հունիսի 27-ի թիվ 783-Ն որոշմամբ և «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1» և «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրերով գնման ընթացակարգերով նախատեսված բժշկական նշանակության ապրանքների տեխնիկական բնութագրերը տարբեր են: Ելնելով վերոգրյալից, հայտնում եմ, որ բողոքաբերի կողմից ներկայացված փաստարկները այս մասով հիմնավոր չեն:

Միաժամանակ, հայտնում եմ, որ Առողջապահության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1» և «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրերով գնման ընթացակարգերի շրջանակներում նախատեսվում է ձեռքբերել բժշկական ժամանակակից սարքավորումներ՝ համապատասխանաբար «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար: Առողջապահական կազմակերպություններն անհրաժեշտ սարքավորումներով վերազինմամբ նախատեսվում է գործարկել նոր նեյրովիրաբուժության բաժանմունքներ, ինչպես մեծերի, այնպես էլ մանկական:

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում նախատեսվում է ունենալ տարածաշրջանում առաջին նեյրոնավիգատորով համալրված բաժանմունքը, ինչի շնորհիվ հնարավոր է դառնալու մեր երկրում մեծ տարածում գտած անոթային և ուռուցքաբանական վիրահատությունների իրականացումը, մասնավորապես՝ ուռուցքներ, անևրիզմաներ, ողնաշարի վիրահատություններ: Իսկ «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հնարավորություն կունենա կատարել բնածին արատների, ինչպես նաև մանկական ուռուցքաբանական վիրահատություններ: Արդյունքում, կապահովվի նոր և որակյալ առողջապահական ծառայությունների պատշաճ մատուցումը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/84 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով 20.09.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան:

armeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ Պատվիրատուի կողմից հայտարարված գնման ընթացակարգի բոլոր 14 չափաբաժինների համար գնումների պլանով նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրերով նախատեսված են ֆինանսական միջոցներ:

Ընթացակարգի հրավերով 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 14-րդ չափաբաժիններով սահմանված տեխնիկական բնութագրով նշվել են որակի վկայականներ ISO13485 կամ համարժեք, CE Mark կամ համարժեք:

www.gnumner.am կայքում հրապարակված է ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ տրամադրված պարզաբանումների մասին թվով 4 հայտարարություններ (այսուհետ նաև՝ Հայտարարություններ):

Հայտարարություններում առկա տեղեկատվության համաձայն՝ Ընթացակարգի հրավերի վերաբերյալ հարցումներ են ստացվել 03.10.2019թ.-ին, 07.10.2019թ.-ին, 21.10.2019թ.-ին և 25.10.2019թ.-ին, որոնց վերաբերյալ համապատասխանաբար տրվել են պարզաբանումներ՝ 04.10.2019թ.-ին, 24.10.2019թ.-ին, 22.10.2019թ.-ին և 25.10.2019թ.-ին:

Armeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել 16 կազմակերպություններ:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 30.10.2019թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Վերոգրյալ նորմերի դրույթներով պայմանավորված, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն

հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Օրենքի 2-րդ հոդվածի 24-րդ մասին համաձայն՝ գնման գինը ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինը:

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հաստատվում է բյուջետային ծախսերի գերատեսչական և գործառնական դասակարգմամբ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական

միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը,

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով 20.09.2019թ.-ին «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան:

Armeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ Պատվիրատուի կողմից հայտարարված գնման ընթացակարգի բոլոր 14 չափաբաժինների համար գնումների պլանով նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրերով նախատեսված են ֆինանսական միջոցներ:

Ընթացակարգի հրավերով 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 14-րդ չափաբաժիններով սահմանված տեխնիկական բնութագրով նշվել են որակի վկայականներ ISO13485 կամ համարժեք, CE Mark կամ համարժեք:

www.gnumner.am կայքում հրապարակված ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ հարցումներ են ստացվել 03.10.2019թ.-ին, 07.10.2019թ.-ին, 21.10.2019թ.-ին և 25.10.2019թ.-ին, որոնց վերաբերյալ համապատասխանաբար տրվել են պարզաբանումներ 04.10.2019թ.-ին, 24.10.2019թ.-ին, 22.10.2019թ.-ին և 25.10.2019թ.-ին:

Armeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել 16 կազմակերպություններ:

Սույն գործում առկա փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ առողջապահության նախարարությունը բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգը հայտարարելով Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընթացակարգի 14 չափաբաժինների համար գնումների պլանով նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրերով նախատեսված են ֆինանսական միջոցներ, որպիսի պայմաններում օրենքի վերոնշյալ հոդվածի կիրառումը հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն, գնման ընթացակարգն Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով հայտարարելու արդյունքում, գնման հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների որևէ սահմանափակում, ինչպես նաև գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ չի առաջացրել, որին էլ մասնակցության հայտ է ներկայացրել 16 (տասնվեց) մասնակից, որպիսի պայմաններում «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու համար բավարար հիմքեր առկա չեն:

Անդրադառնալով Ընկերության կողմից բողոքում նշած այն հանգամանքին, որ 07.10.2019թ.-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղարկված հարցման պատասխանը ստացել է 21 օր անց՝ ս.թ. հոկտեմբերի 28-ին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել հետևյալը.

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ www.gnumner.am կայքում հրապարակված ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/14/1»

ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 07.10.2019թ.-ին առկա է միայն մեկ հարցում:

Վերոնշյալ հարցմանն ի պատասխան Պատվիրատուն www.gnumner.am կայքում 24.10.2019թ.-ին հրապարակել է ստացված հարցման վերաբերյալ տրված պարզաբանման մասին հայտարարություն:

Բողոքներ քննող անձը, վերոնշյալներով պայմանավորված, գտնում է, որ Պատվիրատուն 09.10.2019թ.-ի փոխարեն՝ 24.10.2019թ.-ին պարզաբանում տրամադրելով խախտվել է Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Սակայն, Պարզաբանման ժամկետների խախտումը սույն դեպքում, չի կարող գնահատվել, որպես մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացում, քանի որ Ընկերությունը 09.10.2019թ.-ին չստանալով ակնկալվող պարզաբանումը, կարող էր ներկայացնել հարցում կրկին անգամ, ինչպես նաև Ընկերությունը 24.10.2019թ.-ին պարզաբանումը ստանալու պահից հաշված 7 օր ժամանակ ուներ հայտ ներկայացնելու համար (հայտերի բացումը տեղի էր ունենալու 31.10.2019թ.-ին ժամը 17:30-ին):

Նման պայմաններում, պետք է փաստել, որ Ընկերության համար մրցակցության հավասար պայմանների որևէ սահմանափակում, ինչպես նաև գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ չեն առաջացել, վերջինս զրկված չի եղել մասնակցության հայտ ներկայացնելու իրավունքից, որպիսի պայմաններում նույնպես Ընթացակարգը չկայացած հայտարարելու համար բավարար հիմքեր առկա չեն:

Ինչ վերաբերում է Ընկերության բողոքի 1.3 կետերով նշված այն հանգամանքին, որ որոշ չափաբաժինների համար պահանջվել է ISO13485 կամ CE Mark սերտիֆիկատներ, իսկ մյուսների համար ոչ, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմվել են Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին և պայմաններին համապատասխան, մասնավորապես գնման առարկայի հատկանիշները պարունակելով կոնկրետ պահանջ և հղումներ, բնութագրերում սահմանել է «կամ համարժեք» բառերը, իսկ մյուսների դեպքում չսահմանելով վերը նշված պահանջները ոչ թե դրսևորել է խտրական մոտեցում, այլ հակառակը՝ մնացած չափաբաժինների մասով ստեղծել է ավելի լայն պայմաններ գնման ընթացակարգի մասնակիցների համար՝ ապահովելով հնարավոր մասնակիցների շրջանակների ընդլայնումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերության կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքներն անհիմն են, իսկ Պատվիրատուի գործողությունների արդյունքում չեն

սահմանափակվում հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները: Հատկապես այն դեպքում, երբ Պատվիրատուի կողմից ներկայացված բողոքի առարկություններով հերքվում են Բողոքաբերի կողմից նշված հնարավոր մասնակիցների մրցակցության և գնումների օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման առկայությունը: Իսկ մասնակցության հայտ ներկայացրած 16 (տասնվեց) մասնակիցների առկայության հանգամանքը վկայում է ևս, որ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքի խախտում առկա չէ, որպիսի պայմաններում ապահովվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 30.10.2019թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/84 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**